

ԻԶՄԻՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ա.

Իզմիրի Ազգային կեանքը երբ ուզենք վերլուծել, միջիթարական գրեթէ ոչինչ պիտի գտնենք. նոյնիսկ երբ Հայ Գրի և Տպագրութեան գիտերու կրկնակ Մեծ Եղբայրներին առթիւ գաւառի խոր անկիւնները պատրաստութիւններ կը տեսնեն՝ պէտք եղած հանդիսաւորութեամբ տօնելու զայն, գրական այսքան մեծ փառք պարած Իզմիրի հայութեան այժմու սերունդը թրմրած, մեռելոտած կեանք մը կապրի և ոչ մէկ հետաքրքրութիւն ցոյց կուտայ համազգային խոշոր նշանակութիւն ունեցող այս տօնական օրերուն համար:

Ճիշտ 13 ամիս առաջ էր որ Գաւառ. Ուսում. Խորհուրդի նախաձեռնութեամբ՝ Ազգային երեք յարանուանութիւններու և մամուլի ներկայացուցիչներու մասնակցութեամբ Եղբայրների Երկարատեւ Երկարատեւ Երկարատեւ մը կազմուեցաւ հոս. որ հազիւ 1-2 նիստ գումարելու շափ կեանք մը ունեցաւ. անկէ անդին ոչ ժողով հրաւիրող և ո՛չ ալ այդ մասին խորհող մը գտնուեցաւ. մեր ազգային վերին Մարմիններուն մէջ...

Ճիշտ է որ այս մեռելութեան, այս այլատեսման գիտաւոր պատասխանատունը ըստ ինքը ժողովուրդն է, սակայն խնդրի է թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են մեր ազգային ղեկավար Մարմիններուն կողմէ՝ ժողովուրդին այս դէպի անդունդ տանող ճամբուն վրայ թուր կանգնեցնելու և շիտակ ճամբայ մը գծելու համար անոր առջեւ. կը հարցնենք, այո՛, ազգային վերին իշխանութիւնները, իրենց պաշտօնին իսկ բերումով, ի՞նչ բրած են ցարդ՝ ազգային վերածնութեան Մեծ Գործին տեսակէտով, և ինչով կարգարացնեն իրենց գոյութիւնը:

Մեր այս հարցումին պատասխանը շատ բան պիտի ըսէր հանրութեան. եթէ քաջութիւնը ունենային այդ ղեկավար մարմինները հրապարակաւ զայն ըսելու բարձրաձայն. եւ որովհետեւ անոնց քով կը պակի քաղաքացիական ճշմարիտ արիւթիւնը և պաշտօնի գիտակից ըմբռնուած, բնական է որ անոնք խուսափին հանրութեան գաղափարներին ներկայանալէ: Ուստի մենք մեր հրապարակագրի պարտականութիւնը կատարելու համար կուզենք համառօտ գծերով պատկերացնել Իզմիրի Ազգ. կեանքը:

Առնենք ուրեմն նախ Ազգ. Գաւառ. Երեսփոխանական Ժողովը. — Ի՞նչ բրած է ան՝ հանրային օգտակարութեան տեսակէտէն, — գրեթէ ոչինչ. սմբողջ տարուայ մը ընթացքին 6-7 ժողով գումարած է, որուն 4-5ը լոկ ինձե՛տան վարդապետի եպիսկոպոսացման խնդրին յատկացուցած է բոլորովին աննպատակ կերպով, իսկ անկէ անդին բնաւ չէ հտաքրքուած թէ իրմէ բխած մրտնդները «Ազգային Սահմանադրութեան և Կեդրոնի վարչութիւնէն սահմանեալ օրինաց և հրահանգաց անթերի գործադրութեան» կը հետևին: Մեր Գաւառ. Ժողովը երեք չէ հետամտած Ազգ. պիւտձէի հարցով, այնպէս որ այսօր 5 տարի է հաշիւ ներկայացուած չէ իրեն, հակառակ որ այդ 5 տարուայ միջոցին մօտաւորապէս 25,000 ոսկիի գործառնութիւն մը ունեցած է Ազգ. Առաջնորդարանը...

Նոյն ուղղութեան հետեւած է Ազգ. Գաւառ. Վարչութիւնը: Ճիշտ է որ ան գրեթէ ամէն շաբթու իր օրինական նիստերը գումարած է, և օրակարգի վրայ գտնուող խնդիրներուն ըստ կարելոյն ընթացք տուած է, բայց անկէ անդին ոչինչ բրած է Իզմիրի և թեմերու Հայ կեանքի տեսակէտով: Ան ո՛չ միայն այս ուղղութեամբ որեւէ նախաձեռնութիւն չէ ունեցած, այլ ընդհակառակը անոնց վատթարացման, խաթարման տեղի տուած է՝ շնորհիւ իր անտարբերութեան: Տեսէ՛ք թեմերու ողբալի կացութիւնը, տեսէ՛ք մեր ազգային վարժարաններու այժմու վիճակը, տեսէ՛ք մեր Հիւանդանոցը, տեսէ՛ք մեր Ընթերցատունը, և չարդէն ձեր աչքին առջեւ պարզուած կ'ըլլայ մեր ազգային մտամշակման և ասարակական խաչուած պատկերը:

Իտիրնէի արկածեալներուն, կամ «Հայունհաց Ազգանուէրին» համար 100 ահան ոսկի ճար-ճարակ ընել խրկելով չէ որ մեր ազգային վերածնութեան գործին ծառայած պիտի ըլլանք: Հոս Իզմիրի և շրջակայներուն մէջ 36,000ի շափ հայութիւն մը ունինք, որ արհամարհելի տարր մը չէ. ի՞նչ կը խորհուրտանոնց մասին, ի՞նչ ձեռնարկներ եղած է հետզհետէ անոնց դէպի ազգային անկում գիմելուն առաջը առնուելուն տեսակէտով: Դիտեցէ՛ք մեզ շրջապատող ազգերը, և պիտի տեսնէք թէ անոնք անտեսական և քաղաքակրթական տեսակէտով ի՞նչ հսկայ նուաճումներ կ'ընեն ամէն տարի, և մենք որչա՛փ ետ կը մնանք անոնցմէ:

Մեր Ազգ. Գաւառ. Վարչութիւնը ահա այս ուղղութեամբ ոչ մէկ ձեռնարկ, ոչ մէկ ուսումնասիրութիւն և ոչ մէկ գործ տեսած է. հետեւաբար պատասխանատու է հանրութեան առջեւ, քանի որ ըստ Ազգ. Սահմանադրութեան Գաւառ. Վարչութեան Երկ յօդուածին՝ իր պաշտօնն է. —

Ա. Գաւառին ազգային Բարոյական գործոց ընդհանուր ծառայիչը.
 Բ. Գաւառին Ազգային Բարեկեցութեան և անդորութեան հոգ սանիչ:
 Մենք ունինք տակաւին մեր ըսելիքները: